ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 37-Ա

<<27>> մարտի 2025 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի N 26-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված <<Համայնքի ավագանու կողմից գույքահարկի եվ հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգի>> 8-րդ կետը, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության քննիչ, երկրորդ դասի խորհրդական Գ. Գրիգորյանի 2025 թվականի հունվարի 10-ի N 5119-651004-25 գրությամբ քաղաքացի Հակոբ Հովհաննեսի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող <<MERSEDES-BENZ CLK 320>> մակնիշի 19UU900 պետ. համարանիշի տրանսպորտային փոխադրամիջոցը 19.05.2019 թվականից մինչև 20.12.2024 թվականը գտնվել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Բաղրամյանի բաժնի հատուկ պահպանվող տարածքում և չի շահագործվել

Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 27-ի <<Քաղաքացի Հակոբ Հովհաննեսի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող <<MERSEDES-BENZ CLK 320>> մակնիշի 19UU900 պետ. համարանիշի տրանսպորտային փոխադրամիջոցի նկատմամբ գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին>> N 26-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) Որոշման վերնագրում նշված <<ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ>> բառերից հետո ավելացմել <<ՄԱՍՆԱԿԻ>> բառը:

բ) Որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ՝

<<1. Սահմանել գույքահակի մասնակի արտոնություն՝ քաղաքացի Հակոբ Հովհաննեսի Հակոբյանին /Անձնագիր՝ AT0433629, տրված՝ 15.05.2020թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Ջրափի, 7-րդ փողոց, տուն 14/ սեփականության իրավունքով պատկանող <<MERSEDES-BENZ CLK 320>> մակնիշի 19UU900 պետ. համարանիշի տրանսպորտային փոխադրամիջոցի առ. 20.03.2025 թվականի դրությամբ ունեցած ընդամենը 463 421 /չորս հարյուր վաթսուներեք հազար չորս հարյուր քսանմեկ/ ՀՀ դրամ գույքահարկի ապառքի և հաշվարկված տույժերի 50 տոկոսի նկատմամբ՝ գումարով՝ 231 711 /երկու հարյուր երեսունմեկ հազար յոթ հարյուր տասնմեկ/ ՀՀ դրամ:>>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկման հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ՝11	դեմ՝0	ձեռնպահ՝0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	----------	----------	----------
Ն. ՍԱՐՈՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	----------	----------	----------
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ	----------	----------	----------
Գ. ՊՈՂՈՍՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<27>> մարտի 2025 թ.
քաղաք Մարալիկ